ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա 597 **Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր** (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչատրյան
ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Սվետլանա Հարությունյան
ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրցյան
ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան
ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 42

Էլեոնորա Զաքարյան, Մարինե Միքայելյան
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 61

Մանե Տոնոյան
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան
ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրցյան
ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվետլանա Հարությունյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 113

Լիլիթ Ավետիսյան, Սոնա Մանուսյան
ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ 128
Քնարիկ Առաքելյան
ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 145
Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 153
Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 179
Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ 193
Աստղիկ Սերոբյան
ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 210
Անուշ Մկրտչյան
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 227
Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան
ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան
ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257
Նարինե Ադամյան, Իրինա Խանամիրյան
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ԱՐԺԵԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 263
Կարինե Գրիգորյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Լիլիթ Գարգրցյան

Տարիքը յուրահատուկ կատեգորիա է մարդկային էակի համար, քանզի ունի դիտարկման առնվազն երկու հարթություն: Մի կողմից՝ դա օբյեկտիվ, բացարձակ բնութագիր է, որը գործում է անկախ մարդու կողմից դրա գիտակցումից, հաշվարկվում է ժամանակի ֆիզիկական միավորներով և նույն կերպ է փոփոխվում բոլոր մարդկանց համար: Մյուս կողմից՝ դա սուբյեկտիվ, ներքին հաշվարկման համակարգ է, որը ներառում է մարդու կողմից սեփական տարիքի գիտակցումը, դրա ներքին ապրումը, տարիքային նույնականությունը, վերաբերմունքը սեփական տարիքին: Տարիքը՝ որպես օբյեկտիվ, բացարձակ բնութագիր, հանդես է գալիս որպես մի շարք սոցիալական, հասարակական իրադարձությունների կարգավորիչ՝ կրթական հաստատություններ հաճախելը, քաղաքացիական հասունությունը, կենսաթոշակի անցնելը և այլն: Օբյեկտիվ տարիքը, բացի բացարձակ կատեգորիա լինելուց քրոնոլոգիական տարիքի ձևով, ունի նաև հարաբերական ենթատեսակներ՝ կենսաբանական, հոգեբանական, սոցիալական, որոնք ևս հաշվարկվում են օբյեկտիվ չափանիշներով:

Չնայած քրոնոլոգիական տարիքը մարդու կարևորագույն բնութագրերից մեկն է, մարդու կյանքին զուգընթաց՝ այն կորցնում է իր նկարագրականությունը զարգացման հասկացման համար: Եթե զարգացման վաղ փուլերում կոնկրետ քրոնոլոգիական տարիքի համար հնարավոր է հարաբերական ճշգրտությամբ սահմանել զարգացման նորմատիվներ, ապա հասունության փուլում զարգացման նորմատիվների սահմանումը դառնում է գրեթե անհնարին: Քրոնոլոգիական տարիքի նշանակությունը փոխվում է նաև մարդու ինքնագիտակցությունում. որքան մարդը մեծանում է, այնքան նրա համար նշանակալի է դառնում ոչ թե իր անձնագրում ամրագրված տարիքը, այլ այն տարիքը, որն ինքը զգում է: Նույն կերպ, ուշ հասունության փուլում մարդու սուբյեկտիվ բարեկեցությունն ավելի քիչ է պայմանավորված նրա օբյեկտիվ՝ քրոնոլոգիական տարիքով, քան այդ տարիքի և տարիքային փոփոխությունների նկատմամբ մարդու վերաբերմունքով: Այսպիսով, հասունության փուլում և հատկապես միջին և ուշ հասունությունում մենք ունենում ենք քրոնոլոգիական տարիքի ոչ պակաս ազդեցիկ այլընտրանք՝ տարիք, որը գոյություն ունի սուբյեկտիվ հարթության մակարդակում:

Տարիքի սուբյեկտիվ կողմը ներկայանում է տարիքային նույնականություն, սուբյեկտիվ տարիքային նույնականություն, ընկալվող տարիք, տարիքի ինքնագնահատում, սուբյեկտիվ տարիք, ցանկալի տարիք կատեգորիաներով: Այս տերմինները երբեմն կիրառվում են որպես հոմանիշներ, իսկ երբեմն նույն եզրույթով սահմանվում են տարբեր երևույթներ: Սուբյեկտիվ տարիքը հիմնականում սահմանվում է որպես այն տարիքը, որը մարդը զգում է [5, 7, 9, 15]: Հետազոտողների մի մասը որպես հոմանիշ են օգտագործում սուբյեկտիվ տարիք և տարիքային նույնականություն տերմինները՝ որպես այն տարիք, որը մարդը զգում է [19, 8]: Տարիքային նույնականությունը նաև սահմանվում է որպես սեփական տարիքի սուբյեկտիվ գնահատում [14]:

Դ. Ռուբինը սուբյեկտիվ է անվանում մարդու կողմից իրեն վերագրվող տարիքը, սակայն, միաժամանակ կիրառում է նաև «զգացվող տարիք» և «ինքնընկալման տարիք» եզրույթները [16]:

Ռ. Կաստենբաումն [13] առաջարկել է «անձնային տարիք», Բ. Բարակը [6]՝ «կոգնիտիվ տարիք» եզրույթը, սակայն, ըստ էության, երկու հետազոտողներն էլ նույն երևույթի մասին են խոսում, քանի որ տալիս են այս երևույթների նույն կառուցվածքային նկարագիրը՝ արտաքին տեսքի տարիք, զգացողության տարիք, ակտիվության տարիք, հետաքրքրության տարիք: Տարիքի սուբյեկտիվ, ներքին զգացողությունը նաև անվանում են «ընկալվող տարիք» [18], տարիքի ինքնընկալում [8], տարիքի ինքնագնահատական [3] կամ սեփական տարիքի կոգնիտիվ-սուբյեկտիվ գնահատական [2]: Ա. Կրոնիկը և Ե. Գոլովախան համարում են, որ անձի հոգեբանական ժամանակի իրականացվածությունը գիտակցվում է «ներքին» տարիքի յուրահատուկ ապրման ձևով, որն անվանում են «հոգեբանական տարիք» (այս հասկացությունը տարբերվում է հոգեբանական գրականության մեջ ընդունված հոգեբանական տարիքի՝ որպես հոգեկան կամ հոգեֆիզիոլոգիական ֆունկցիաների տարիք հասկացումից): Հոգեբանական տարիքը, այս մեկնաբանմամբ, անձի հոգեբանական անցյալի չափն է, որը որոշվում է մարդու համար իր կյանքի իրադարձությունների նշանակալիությամբ, հագեցվածությամբ, նրա անձնային իրականացվածությամբ [1, էջ 172-173]:

Տարիքի սուբյեկտիվ կողմն ունի նաև մեկ այլ դրսևորում՝ ցանկալի տարիքը, որը տարբերվում է սուբյեկտիվ տարիքից, քանի որ այն ներկայացնում է ոչ թե մարդու կողմից իր տարիքի ընկալումը, այլ կյանքի ուղու որևէ հատվածի վրա լինելու նրա ցանկությունը [11]: Նույն իմաստով կիրառվում է նաև իդեալական տարիք հասկացությունը [5]:

Նշվածներից ամենաուսումնասիրվածը սուբյեկտիվ տարիքի ֆենոմենն է: Սուբյեկտիվ տարիքի համեմատական հետազոտությունները

տարբեր երկրներում ցույց են տվել, որ քրոնոլոգիական և սուբյեկտիվ տարիքի միջև տարամիտումն աճում է տարիքին զուգընթաց [13, 3, 4, 19], չնայած Դ. Ռուբինն ու Դ. Բերնշտեյնը պնդում են, որ հարաբերակցական առումով այդ տարամիտումը նույնն է մնում և կազմում է ակտուալ տարիքի 20%-ը [16]: Հայտնի է նաև, որ տարիքին զուգընթաց՝ մեծանում է ոչ միայն սուբյեկտիվ և քրոնոլոգիական տարիքների, այլ նաև վերջիններիս և ցանկալի տարիքի միջև տարամիտումը [5]:

Տարբեր ուսումնասիրություններում բացահայտված է սուբյեկտիվ տարիքի կապն առողջական վիճակի [8], ֆիզիկական գործառնության [17], սոցիալ-տնտեսական կարգավիճակի, անձնային հասունության, անկախության [12], էքստրավերսիայի, լավատեսության [3], անձնային գծերի [3, 10] և այլ գործոնների հետ: Սուբյեկտիվ տարիքը հատկապես ուսումնասիրված է տարեցների շրջանում. փորձ է արվում պարզելու դրա ազդեցությունը ծերացման գործընթացի վրա [9, 17, 18]:

Չնայած առկա հետազոտությունների մեծամասնությունը նվիրված է սուբյեկտիվ տարիքին, տարիքի սուբյեկտիվ կողմն էլ ավելի լայն է: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ տարիքի սուբյեկտիվ կողմը ներառում է սեփական տարիքի կոգնիտիվ և հուզական արտացոլումը՝ տարիքի ընկալումը, տարիքային փոփոխությունների գիտակցումը, պատկերացումներն իր տարիքի մասին և վերաբերմունքը տարիքի, տարիքային փոփոխությունների նկատմամբ, դրանց ընդունումը կամ մերժումը: Մի կողմից՝ անկիայտ է, որ տարիքի սուբյեկտիվ կողմը կապված է մարդու ինքնընկալման, ռեֆլեքսիայի և ինքնավերաբերմունքի հետ, մյուս կողմից՝ տարիքի սուբյեկտիվ կողմը կարող ենք դիտարկել որպես այս երևույթների մաս: Ե. Սերգիենկոն դիտարկում է սուբյեկտիվ տարիքը որպես անձնային նույնականության առանցքային բաղադրիչ և համարում է, որ այն արտացոլում է սեփական ռեսուրսների և հնարավորությունների մասին մարդու պատկերացումները [2]:

Տվյալ հետազոտությամբ մենք փորձել ենք ուսումնասիրել տարիքի սուբյեկտիվ կողմի տարբեր դրսևորումները և առանձնահատկությունները: Հետազոտության նպատակն էր բացահայտել սեփական տարիքի ընկալումը, դրա նկատմամբ վերաբերմունքը և դրանք պայմանավորող սուբյեկտիվ պատճառները հասունության փուլում:

Հետազոտության մեթոդաբանությունը. առավել ամբողջական և խորքային տվյալներ ստանալու համար հետազոտությունն իրականացվել է որակական դիզայնով: *Ընտրանքը.* ելնելով հետազոտության որակական բնույթից՝ ընտրանքը կազմվել է 18 անձանցից՝ 25-30, 40-45, 60-65 տարիքային խմբերից յուրաքանչյուրում իգական և արական սեռի 3-ական

ներկայացուցիչ: *Մեթոդը.* անհատական կիսակառուցվածքայնացված հարցազրույց, որը դուրս էր բերում տարիքի սուբյեկտիվ ընկալման առանձնահատկությունները, դրսևորման ձևը, պայմանավորող գործոնները, սեփական տարիքի նկատմամբ վերաբերմունքը, տարիքային նույնականացումը, ցանկալի տարիքը և այլն: Որպես սուբյեկտիվ մենք դիտարկել ենք այն տարիքը, որը մարդը զգում է, իսկ տարիքային նույնականությունը դիտարկել ենք նույնականացումը որևէ տարիքային խմբի հետ: Հարցազրույցի տվյալների վերլուծությունն իրականացվել է որակական կոնտենտ վերլուծության և իմաստի խտացման միջոցով:

Հետազոտության արդյունքները. սուբյեկտիվ տարիքը հիմնականում դրսևորվում է ապրման, զգացողության ձևով, հետազոտվողների կողմից բնորոշվում է որպես «տարիքի ներքին զգացողություն», «ներքին տարիք», «հոգու տարիք»: Ըստ որում, սուբյեկտիվորեն ավելի երիտասարդ զգալը զուգորդվում է օբյեկտիվ, քրոնոլոգիական տարիքի չընդունմամբ («չեմ ուզում հավատալ, որ … տարեկան եմ») կամ տվյալ քրոնոլոգիական տարիքի լինելու ապրման բացակայությամբ («դեռ չեմ զգում, որ այդքան մեծացել եմ, դեռ գիտեմ, թե ավելի ջահել եմ»): Սուբյեկտիվ տարիքը հետազոտվողների կողմից հիմնականում ընկալվում է որպես ավելի իրական, քան քրոնոլոգիական տարիքը («ես այնքան եմ, որքան զգում եմ, կարևոր չէ իմ անձնագրում ինչ է գրված»): Սուբյեկտիվորեն ավելի երիտասարդ զգալը զուգակցվում է նաև հասակակիցների որոշ առանձնահատկությունների չընդունմամբ՝ զարգացման կանգը, կարծրացած մտածելակերպը, սահմանափակությունը, կյանքից անբավարարվածությունը, ավանդապահ մոտեցումները, անգամ շարժուձևն ու հագուստի ոճը:

Բոլոր հետազոտվողների սուբյեկտիվ տարիքը փոքր է օբյեկտիվ տարիքից, բացառությամբ մեկ դեպքի, երբ դրանք համընկնում են 28 տարեկան կնոջ դեպքում: Ըստ որում, սուբյեկտիվ և քրոնոլոգիական տարիքների տարբերությունը մեծանում է տարիքին զուգընթաց: Այդպես, 25-30 տարեկանների խմբում այդ տարբերությունը միջինը 4,5 տարի է, 40-45 տարեկանների խմբում՝ 14 տարի, 60-65 տարեկանների խմբում՝ 17 տարի:

Քանի որ սուբյեկտիվ տարիքի կորելյացիոն կապերը տարբեր հետազոտություններում ուսումնասիրված են, մենք խնդիր էինք դրել պարզել ակտուալ տարիքից ավելի երիտասարդ զգալու սուբյեկտիվ պատճառները, այն գործոնները, որոնք հետազոտվողների կարծիքով՝ պայմանավորում են իրենց «ներքին տարիքը»: «Երիտասարդ» սուբյեկտիվ տարիքի առավել նշանակալի սուբյեկտիվ (հետազոտվողների անձնական գնահատմամբ) դետերմինանտը աշխարհայացքն է, այս կատեգորիայում միավորվում են մարդու

վերաբերմունքն այլ մարդկանց, կյանքին, ավանդական կամ ժամանակակից մոտեցումները շրջապատին և հարաբերություններին: Հաջորդ կարևոր սուբյեկտիվ դետերմինանտը ֆիզիկական կամ առողջական վիճակն է, որն առավել արտահայտված է հասունության ուշ փուլում: Ըստ որում, 60-65 տարեկանների խմբում արձանագրվել է «սուբյեկտիվ ընկալվող տարիքի» և «սուբյեկտիվ մարմնական տարիքի» տարանջատում: Սա դրսևորվում է. «Քանի տարեկան եք Ձեզ զգում» հարցին տրված երկակի պատասխաններում «մոտ 30, երբ նստած կամ պառկած եմ, իսկ երբ վեր եմ կենում ցավերիս հետ միասին, իմ տարիքից էլ մեծ եմ զգում»: Հաջորդ սուբյեկտիվ դետերմինանտն ակտիվությունն է, այն, ինչով մարդը զբաղվում է: Այս գործոնը կարևորվում է արական սեռի ներկայացուցիչների կողմից: Էական գործոն է համարվում նաև մոտիվացիան: Հարկ է նշել, որ «պարզապես այդպես եմ զգում» տիպի պատասխանները մենք չենք դիտարկել որպես սուբյեկտիվ տարիքի դետերմինանտ, այլ համարել ենք դրա դրսևորման ձև: Ակտուալ տարիքից ավելի երիտասարդ զգալու բոլոր պատճառները մենք միավորել ենք արտաքին, ներքին, գործընթացային դետերմինանտներ կատեգորիաներում (ընդհանրական պատկերը ներկայացված է Նկար 1-ում):



Նկար 1. Սուբյեկտիվ տարիքի դետերմինանտներ

Չնայած արտաքին դետերմինանտներն ավելի բազմաքանակ են, սակայն որպես առավել ազդեցիկ նշվում են ներքինները:

Ինչ վերաբերում է տարիքային նույնականությանը, ապա մեծամասնությունն իրեն նույնականացնում է ավելի երիտասարդների հետ, կան նաև մեծերի, իրենց տարիքի և միաժամանակ երկու տարբեր տարիքային խմբերի հետ նույնականացվողներ: Մի քանիսը գտնում են, որ իրենք նույնականացվում են ոչ թե կոնկրետ տարիքային խմբի, այլ որոշակի հետաքրքրություններով մարդկանց հետ, այդ պատճառով նույնականացման տարիք չեն նշում:

Բոլոր հետազոտվողներն իրենց արտաքին տեսքը գնահատում են ավելի երիտասարդ, քան իրենց ակտուալ տարիքն է: Սակայն 60-65

տարեկաններից ոմանք նշում են, որ երիտասարդ տեսքը բավարար չէ, և միևնույն է, ֆիզիկապես զգում են իրենց «ոչ երիտասարդ» լինելը: Սեփական հետաքրքրությունների և գործունեության վերաբերյալ հիմնականում հետազոտվողները դժվարանում են կոնկրետ տարիք նշել, հնարավոր է՝ այն պատճառով, որ գործունեությունն ու հետաքրքրությունները չունեն այնպիսի տարիքային սպեցիֆիկա, ինչպես արտաքին տեսքը:

Աշխատանքի և ընտանեկան կարգավիճակի ազդեցությունը սուբյեկտիվ տարիքի վրա միանշանակ չի գնահատվել հետազոտվողների կողմից: Մեծամասնությունը համարում է, որ այն գործունեությունը, աշխատանքը, որ ներկայումս կատարում են, տարիքի սուբյեկտիվ զգացողության վրա էական ազդեցություն չունի, իսկ մի մասը (հիմնականում կանայք) համարում է, որ աշխատանքը նպաստում է երիտասարդ զգալուն, իսկ չաշխատելը մեծացնում է սուբյեկտիվ տարիքը: Ընտանեկան կարգավիճակը, մեծամասնության կարծիքով, ևս չի ազդում իրենց սուբյեկտիվ տարիքի վրա, սակայն մի քանիսը կարծում են, որ սեփական երեխաների, թոռների հետ շփումը երիտասարդացնում է սուբյեկտիվ տարիքը, մյուս մասը (հիմնականում չամուսնացածները), ընդհակառակը, գտնում են, որ ամուսնությունը մեծացնում է սուբյեկտիվ տարիքը, քանի որ ընտանիք և երեխաներ ունենալը պատասխանատվություն է առաջացնում, իսկ պատասխանատվությունը մեծացնում է:

Հարցազրույցը նաև բացահայտում էր ուրիշների կողմից վերագրվող տարիքի, հասակակիցների հետ համեմատության առանձնահատկությունները, որոնցից մեկը, մեր կարծիքով, կարող է հանդիսանալ տարիքի սուբյեկտիվ ընկալման վրա ազդող գործոն, մյուսը՝ սեփական տարիքի ռեֆլեքսիայի մասնավոր գործընթաց: Բոլոր հետազոտվողները, բացի մեկից, գտնում են, որ այլ մարդիկ իրենց համարում են ավելի երիտասարդ, քան իրենց ակտուալ տարիքն է: Հետազոտությունից պարզ դարձավ, որ հասուն տարիքի մարդիկ իրենց հաճախ համեմատում են հասակակիցների հետ, համեմատելիս հիմնականում նկատում են իրենց տարբերությունը տարեկիցներից, ավելի սակավ՝ նմանությունները: Հասակակիցների հետ համեմատության առարկա, առաջին հերթին, դառնում է արտաքին տեսքը (ըստ որում, թե՛ արական, թե՛ իգական սեռի դեպքում), այնուհետև մտածելակերպը, ընտանեկան կարգավիճակը, որոնց հաջորդում են ձեռքբերումները, աշխատանքը, միջանձնային հարաբերությունները, առողջությունը, զբաղմունքը: Հասակակիցների հետ համեմատությունից տարիքի սուբյեկտիվ ընկալումը կամ չի փոխվում, կամ փոխվում է դեպի երիտասարդացում: Միայն այն դեպքում, երբ կինը շատ վաղ է մայրացել, հասակակիցների հետ համեմատելիս իրեն մեծ է զգում:

Չնայած առկա հետազոտություններում բացահայտվել է, որ ցանկալի տարիքը փոքր է լինում թե՛ իրական, թե՛ սուբյեկտիվ տարիքից, մեր հետազոտությունում արձանագրվել է ցանկալի և իրական տարիքների համընկնման 4 դեպք (մնացած դեպքերում ցանկալի տարիքը փոքր էր իրականից): Հետաքրքիր է, որ բոլոր այս դեպքերում սուբյեկտիվ տարիքը փոքր էր իրականից: Անսպասելի է նաև այն, որ այս համընկնումներից երկուսը 60-65 տարեկանների խմբում է հանդիպում, հետազոտվողները նշում են, որ չէին ցանկանա փոխել իրենց տարիքը հնարավորության դեպքում, քանի որ «տարիքը նշանակություն չունի, ինքնազգացողությունն է կարևոր»:

Մարդու համար լավագույն՝ «ոսկե տարիքը» մեծամասնությունը համարում է միջինը 25-40 տարեկանն ընկած ժամանակահատվածը՝ այն բնութագրելով որպես հասունության, կայացածության, «բերքահավաքի» շրջան: Ոմանք լավագույն տարիք էին համարում մանկությունը՝ որպես անհոգ շրջան, մյուսները գտնում էին, որ չկա հստակ սահմաններով «ոսկե» տարիք, ամեն տարիքում կան «ոսկե» պահեր:

Սեփական տարիքի վերաբերյալ մտորումները երիտասարդների խմբում վերաբերում են հիմնականում հասարակության մեջ ընդունված նորմատիվային իրադարձությունների (ամուսնություն, կայուն աշխատանք) հետ կապված տարիքային սպասումներին և իրականացվելիք գործերին: 40-45 տարեկանները տարիքի մասին մտածելիս ունենում են հանկարծակի ծերանալու վախ, ժամանակի արագ անցնելու զգացողություն, կրկին երիտասարդ լինելու ցանկություն: 60-65 տարեկանները հիմնականում չեն մտածում կամ աշխատում են չմտածել իրենց տարիքի մասին (այսինքն՝ խուսափում են ծերանալու մտքից), մյուս մասը բնական է համարում, որ մեծանում է:

Այսպիսով, սուբյեկտիվ տարիքը դրսևորվում է ապրման, զգացողության ձևով, այդ պատճառով կարելի է համարել, որ այն կոգնիտիվ–հուզական բնույթ ունի, կարելի է այն սահմանել որպես «ընկալվող, զգացվող տարիք»: «Երիտասարդ» սուբյեկտիվ տարիքը զուգակցվում է ակտուալ տարիքի չընդունմամբ կամ ապրվում է որպես դրանից ավելի իրական: «Երիտասարդ» սուբյեկտիվ տարիքը պայմանավորող առավել նշանակալի գործոններ են հանդիսանում աշխարհայացքը, առողջական վիճակը, մոտիվացիան և ակտիվությունը: Հնարավոր է տարբերակել սուբյեկտիվ տարիք և տարիքային նույնականություն հասկացությունները, եթե առաջինը դիտարկում ենք որպես մարդու կողմից ընկալվող, զգացվող տարիք, երկրորդը՝ որպես որոշակի տարիքային խմբի հետ նույնականացում: Հասունության բոլոր փուլերում (25 տարեկանից հետո), անկախ սեռից, սուբյեկտիվ տարիքը փոքր է իրական տարիքից, սակայն ցանկալի

տարիքը որոշ դեպքերում կարող է և համընկնել իրական տարիքի հետ: Հասուն տարիքում մարդիկ իրենց արտաքին տեսքը գնահատում են իրենց իրական տարիքից ավելի փոքր, ինչպես նաև համարում են, որ ուրիշներն էլ իրենց ընկալում են որպես ավելի երիտասարդ: Այս տարիքում մեծամասնությունն իրեն համեմատում է հասակակիցների հետ, չնայած այդ համեմատությունը ոչ միշտ է պայմանավորում սեփական տարիքի սուբյեկտիվ գնահատականը: Երիտասարդության փուլում տարիքի ռեֆլեքսիան ուղեկցվում է հետագա անելիքների և իրադարձությունների վերաբերյալ մտորումներով, միջինում՝ ծերանալու վախով և երիտասարդանալու ցանկությամբ, ուշում՝ մեծանալու փաստի մերժմամբ կամ ընդունմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Головаха, Е., Кроник, А**. *Психологическое время личности*. М., Смысл, 2008.
2. **Сергиенко, Е**. Субьективный возраст в контексте системно-субьектного подхода. Учен. зап. Казан. ун-та. *Сер. гуманит. науки*, Т. 153, кн.5, 2011, стр. 89-101.
3. **Филимоненко, Т.** Психологические факторы самооценки собственного возраста. *Ананьевские чтения,* 1998. Հասանելի է http://psihologia.biz/psihologiya-psihologiya-obschaya_693/psihologicheskie-faktoryi-samootsenki-14499.html
4. **Филимоненко, Т.** Субьективный возраст как психическое явление. *Тезиси научно-практической конференции «Психология XXI века»,* 1999. Հասանելի է http://psihologia.biz/psihologiya-psihologiya-obschaya_693/filimonenko-tyu-subektivnyiy-vozrast-kak-17803.html
5. **Barak, B.** Age identity: A cross-cultural global approach. *International Journal of Behavioral Development*, 33 (1), 2009, pp. 2–11. Հասանելի է http://dx.doi.org/10.1177/0165025408099485
6. **Barak, B., Schiffman, L.** Cognitive Age: A Nonchronological Age Variable. *Advances in Consumer Research*, Volume 08, 1981, pp. 602-606.
7. **Barrett, A.** Gendered experiences in midlife: Implications for age identity. *Journal of Aging Studies*, N19, 2005, *pp.* 163–183. Հասանելի է http://dx.doi.org/10.1016/j.jaging.2004.05.002
8. **Bowling, A., Sharon, S., Shah, E., Zahava, G., Priyha, S**. Attributes of age-identity. *Ageing and Society* 25, N 04, 2005, pp. 479-500.
9. **Humboldt, S., Leal, I., Pimenta, F., Niculescu, G**. Adjustment to Aging, Subjective Age and Age Representation: Assessing a Nationally-Diverse Population of Older Adults, *Psychology, Community & Health,* Vol. 1(3), 2012, pp. 285–299.
10. **Hubley, A., Hultsch, D.** The relationship of personality trait variables to subjective age identity in older adults. *Research on Aging*, 1994, N16, pp. 415-439.
11. **Hubley, A., Russell, L.** Prediction of subjective age, desired age, and age satisfaction in older adults: Do some health dimensions contribute more than others? (Special section on Subjective Age) *International Journal of Behavioral Development*, N33, 2009, pp. 12-21.

12. **Johnson, M., Berg, J., Sirotzki, T.** Differentiation in Self-Perceived Adulthood: Extending the Confluence Model of Subjective Age Identity, *Social Psychology Quarterly*, Vol. 70, N 3, 2007, pp. 243–261.
13. **Kastenbaum, R., Derbin, V., Sabatini, P. and Artt, S.** The Ages of Me' Toward Personal and Interpersonal Definitions of Functional Aging. *Aging and Human Development*, N3, 1972, pp. 197-211.
14. **Kaufman, G., Elder, G**. Revisiting Age Identity: A Research Note. *Journal of Aging Studies*, 16(2), 2002, pp. 169–176.
15. **Montepare, J**. Subjective age: Toward a guiding lifespan framework. *International Journal of Behavioral Development*, N33, 2009, pp. 42 – 46.
16. **Rubin, D., Berntsen, D.** People over forty feel 20% younger than their age: Subjective age across the lifespan. *Psychonomic Bulletin & Review*, Vol 13 (5), 2006, pp. 776-780.
17. **Stephan, Y., Chalabaev, A., Kotter-Grühn, D., & Jaconelli, A.** Feeling younger, being stronger: an experimental study of subjective age and physical functioning among older adults. *The Journals of Gerontology*, Series B: Psychological Sciences and Social Scinces, Vol. 68 (1), 2013, pp. 1–7.
18. **Uotinen, V., Rantanen, T., Suutama, T.** Perceived age as a predictor of old age mortality: a 13-year prospective study. *Age and Ageing*, N34, 2005, pp. 368–372.
19. **Westerhof, G., Barrett, A., Stevernik, N.** Forever Young? A Comparison of Age Identities in the United States and Germany. *Research on Aging,* N 25, 2003, pp. 366-383.